

“Հայկական ատոմային էլեկտրակայան” ՓԲԸ-ի ղեկավարության հայտարարագիրը բնապահպանության ոլորտում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Ամբողջ աշխարհում շրջակա միջավայրի պաշտպանության և բնապահպանական անվտանգության բարձրացման վերաբերյալ անհետաձգելի միջոցառումների ձեռնարկման խիստ անհրաժեշտությունը նոր խթան է հանդիսանում բնության պահպանության միջոցառումների ուժեղացման և շրջակա միջավայրի վրա անտրոպոգեն ազդեցության նվազեցման համար: Շրջակա միջավայրի վրա ազդեցության հարցերին վերջին ժամանակներս մեծ ուշադրություն է դարձվում ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակով:

“ՀԱԷԿ” ՓԲԸ-ն հանդիսանում է էլեկտրական էներգիայի խոշորագույն արտադրողը Հայաստանում, գտնվում է Արմավիրի մարզում՝ ՀՀ մայրաքաղաք Երևանից 28 կմ հեռավորության վրա: ՀԱԷԿ-ի էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունը կազմում է ավելի քան 2 մլրդ կՎտ/ժ, որը հավասար է ՀՀ-ում էլեկտրաէներգիայի ընդհանուր արտադրության մոտավորապես 40%-ին:

Գիտակցելով էկոլոգիապես մաքուր և անվտանգ միջոցով էլեկտրաէներգիայի արտադրության անհրաժեշտությունը “ՀԱԷԿ” ՓԲԸ ղեկավարությունը սահմանում է հետևյալ սկզբունքները.

-շրջակա միջավայրի պահպանության, բնական ռեսուրսների, ատոմային էներգիայի օգտագործման ոլորտի ստանդարտների և կանոնների, Հայաստանի միջազգային համաձայնագրերի, ՀՀ օրենսդրության պահանջների կատարումը,

-շրջակա միջավայրի պահպանության կառավարման համակարգի ստեղծումը, ներդրումը, աշխատունակ վիճակում պահելը և անընդհատ կատարելագործումը,

-շրջակա միջավայրի վրա ՀԱԷԿ՝ ՓԲԸ գործունեության արդյունքների ազդեցության կառավարումը՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի պահպանության ոլորտի խնդիրները և քաղաքականությունը,

-կառավարման գործող այլ համակարգերի հետ շրջակա միջավայրի պահպանության կառավարման համակարգի կոորդինացիան,

-շրջակա միջավայրի օբյեկտների կենսաբանական, հիդրոքիմիական, հիդրոերկրաբանական վիճակի, ճառագայթումային ֆոնի հսկման կազմակերպման միջոցով ՀԱԷԿ հարակից տարածքների էկոլոգիական հսկողության անցկացում,

-էկոլոգիական հսկողության անցկացում՝ ըստ ճառագայթումային և ոչ ճառագայթումային գործոնների,

-շրջակա միջավայրի պահպանության ոլորտում իր գործունեության կատարելագործման և դրա արդյունավետության պահպանման ձգտում,

-շրջակա միջավայրի վրա ազդեցության սահմանափակում և դրա աղտոտման կանխում՝ այդ նպատակը հավասարակշռելով ռեզիդնի սոցիալ-տնտեսական պահանջմունքների հետ,

-շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտի խնդիրների և նպատակների պարբերաբար վերանայում,

-շրջակա միջավայրի աղտոտման կանխումը, ինչպես ՀԱԷԿ-ի նորմալ շահագործման պայմաններում, այնպես էլ վթարային իրավիճակներում,

-անձնակազմի էկոլոգիական կրթության բարձրացում, շրջակա միջավայրի պահպանության, ինչպես նաև միջուկային արդյունաբերության մեջ ընդունված

դրական փորձի ոլորտում նորմատիվների և օրենսդրության հիմունքների ուսուցման կազակերպման միջոցով,

-բնակչությանը ԱԷԿ-ի հարթակի և հարակից տարածքների շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ բաց, ստույգ տեղեկության տրամադրում,

-ՀՀ հասարակական կազմակերպությունների, կարգավորող մարմինների հետ կառուցողական փոխհարաբերություն շրջակա միջավայրի հարցերում,

“ՀԱԷԿ” ՓԲԸ ղեկավարությունը հայտնում է, որ բնապահպանական միջոցառումները պետք է դառնան ձեռնարկության գործունեության անընդհատ կատարելագործման պրոցեսի անբաժան մասը:

“ՀԱԷԿ” ՓԲԸ ղեկավարությունը կարծում է, որ կազմակերպության վարչական կառավարման համակարգի մեջ շրջակա միջավայրի պաշտպանության հարցերի ինտեգրացումը կօգնի շրջակա միջավայրի պաշտպանության արդյունավետ կառավարմանը, բնապահպանական ցուցանիշների բարելավմանը և դրված խնդիրներին ու նպատակներին հասնելու պարտականությունների և ֆունկցիաների հստակ բաշխմանը: